**Արձանագրություն 2**
**ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ-ԱՄ-ԾՀ-ՀԲՄԾՁԲ-09/25» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.06.2025թ. ժամը 11:00-ին:

*Հանձնաժողովի նախագահ*
Մանվել Հարությունյան - ՀՀ Արագածոտն մարզի ծաղկահովիտ համայնքապետարանի համայնքի ղեկավար առաջին տեղակալ

*Հանձնաժողովի Անդամներ*
Էդգար Մնոյան - ՀՀ Արագածոտն մարզի ծաղկահովիտի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ
Մնացական Գալստյան - ՀՀ Արագածոտն մարզի ծաղկահովիտի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ
Գեղամ Զադիկյան - ՀՀ Արագածոտն մարզի ծաղկահովիտի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ
Վարդան Բոյաջյան - ՀՀ Արագածոտն մարզի ծաղկահովիտի համայնքապետարանի համայնքի ծառայողական մեքենայի վարորդ
***Գնումները Համակարգող*** – Ն.Տիգրանյան

**Օրակարգ**
***Հայտերի բացման և գնահատման նիստի մասին***

**1. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները.**

1. ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԾՀ-ՀԲՄԾՁԲ-09/25» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

ա/ «Արխի Թուլս» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 04234306, էլ հասցե architools@mail.ru, հեռ. 096595010

**2. Տվյալներ մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

2.1 «Արխի Թուլս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների պայմանագրիը/երը/, մասնագետի տվյալները և համապատասխան լիցենզիան/ները/

**3. Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտի մյուս փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**
Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկը.

| Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ | Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ |
|---|---|---|
| | ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1<br>Գեղաձոր բնակավայրի մշակույթի տան դահլիճի հիմնանորոգման | |

| | | |
|---|---|---|
| | աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում | |
| | Գնման գինը՝ 450 000 ՀՀ դրամ | |
| «Արխի Թուլս» ՍՊԸ | 450 000 | 450 000 |

5. Հայտերի վերաբերյալ պարզաբանումներ չեն եղել

**6. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.**

ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարան»-ի կողմից Գեղաձոր բնակավայրի մշակույթի տան դահլիճի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԾՀ-ՀԲՄԾՁԲ-09/25» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցին «Արխի Թուլս» ՍՊԸ-ին տալ մեկ աշխատանքային օր ժամկետ՝ շտկելու սույն արձանագրության 2.1 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

7. Հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2025թ. հուլիսի 17-ին ժամը 10:00-ին:

**7. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ 17.07.2025թ. հանձնաժողովը որոշեց.**

ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարան»-ի կողմից նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԾՀ-ՀԲՄԾՁԲ-09/25» ծածկագրով գնման ընթացակարգի

ա/ 1-ին և 3-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած մասնակից չլինելու պատճառով,

բ/ Հաշվի առնելով, որ «Արխի Թուլս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է արձանագրված անհամապատասխանությունների շտկումը, որը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին, ուստի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Արխի Թուլս» ՍՊԸ -ին:

բ/ Սահմանված կարգով ընտրված մասնակցին առաջարկել կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ________ Մ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ ________ Է. Մնոյան

________ Մ.Գալստյան

________ Գ. Ջաղիկյան

________ Վ. Բոյաջյան

Գնումները համակարգող՝ ________ Ն. Տիգրանյան